ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան
համայնքի ղեկավար՝ պարոն՝
Հ. Բալասյանին

Հարգելի պարոն՝ Բալասյան

2022 թվականի հուլիսի 29-ին ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքապետարան մուտքագրվել է Արկադի Արամի Հարությունյանի ներկայացուցիչ՝ Վալերի Արամայիսի Գրիգորյանի դիմումը հասցեագրված համայնքի ղեկավարին և ավագանու անդամներին ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Սամվել Վարդանյան փողոցի 24 շենքի 32 բնակարանը Արկադի Արամի Հարությունյանին նվիրելու հարցը համայնքի ավագանու նիստին քննարկելու և արդյունքում բարենպաստ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ: Դիմումատուն միաժամանակ նշել է, որ 26.07.2022 թվականին համայնքի ավագանու հերթական նիստին ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 27.07.2022 թվականին դիմում է ներկայացվել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Գևորգյանին, վերջինիս վարույթում գտնվող թիվ ՎԴ/0295/05/21 քաղաքացիական գործը ըստ հայցի Արկադի Արամի Հարությունյանի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի և նույն համայնքի ավագանու անդամների, հայցապահանջից ամբողջությամբ հրաժարվելու մասին:

Հետևաբար հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջները՝ խնդրվում է Ձեզ «ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Սամվել Վարդանյան փողոցի 24 շենքի 32 բնակարանը Արկադի Արամի Հարությունյանին նվիրելու մասին» օրակարգով հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ:

Համայնքի ավագանիներ՝

Հայկ Վարդևանյան

Գեորգի Աղաջանյան

Արգամ Շառյան

Վարդան Սուքիասյան

Ավետիք Ասոյան

Վահրամ Ապրեսյան

Սլավիկ Հարությունյան

Արման Օհանյան

Արտյոմ Ավագյան

Հայկազ Բաղդասարյան

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 01-1695/22
«03» 08 2022 Թ.